ՆՇԱԹԵՐԹ
պետական գրանցման
մասին տեղեկությունների

«ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Գրանցված է՝	ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն
Աշխատակից՝	Աննա Մանուչարյան
Գրանցման ամսաթիվ՝	11.08.2017
Գրանցման համար՝	264.110.970181
ՀՎՀՀ՝	00169374

Պետական գրանցման մասին տեղեկությունների նշաթերթը էլեկտրոնային եղանակով ձևավորված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից և հանդիսանում է **«ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն** նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

Սույն նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը հավաստվում է համակարգի կողմից գեներացված RBFC-FF58-8E86-98D6 ծածկագրով քաղվածքով, որի իսկությունը և արդիականությունը կարող է ստուգվել փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (e-verify.am):

Կազմված է «_06_» ապրիլի 2026 թ.
Բաղկացած է 7 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ»
Սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի
2026 թ. ապրիլի 06 -ի թիվ 001
որոշմամբ

Տնօրեն՝

Նարեկ Վարդանյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«_06_» ապրիլի 2026 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 11.08.2017 թ.
գրանցման համար՝ 264.110.970181
ՀՎՀՀ՝ 00169374
11.08.2017 թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
09 04 2026 թ.
աշխատակից՝

«ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝ «ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ «КРАУДФАНДИНГ ФОРМУЛА» Общество с Ограниченной Ответственностью

կրճատ՝ « КРАУДФАНДИНГ ФОРМУЛА » ООО

անգլերեն լրիվ՝ «CROWDFUNDING FORMULA» LIMITED LIABILITY COMPANY

կրճատ՝ « CROWDFUNDING FORMULA » LLC

1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

Հակոբ Հակոբայան 3, Երևան, ՀՀ:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա որպես այդպիսին գրանցվելու պահից:

2.2. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

2.2.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

2.2.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

2.2.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

2.3. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է ընկերությանը:

2.4. Ընկերության մասնակիցները կարող են տեղեկություններ ստանալ, ընկերության գործունեության մասին գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:

2.5. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

– Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 (մեկ հազար) դրամ, որը բաժանված է 1 (մեկ) բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

Ընկերության 1 բաժնեմասը տեղաբաշխված է, լրիվ վճարված և պատկանում են սույն կանոնադրության հավելվածում նշված մասնակցին (մասնակիցներին):

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, խորհուրդը, Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը:

4.2 Ընկերության ընդհանուր ժողովը՝

4.2.1 Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

4.2.2 Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել հերթական ժողով Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

4.2.3 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

4.2.4 Ընկերության մասնակիցները իրավասու են մասնակցել Ընդհանուր ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն համապատասխան լիազորագիր:

4.2.5 Ընկերության ժողովի նախապատրաստման, անցկացման, վարման կարգերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով և սույն Կանոնադրությամբ:

4.2.6 Ընկերության ժողովի բացառիկ իրավասություններն են.

- Ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,
- Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարումը, ինչպես նաև խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
- Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) պատվիրակելու հարցերը,

- Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը,
- Ընկերության տարեկան հաշվետվությունների , տարեկան հաշվեկշռի հաստատումը.
- Ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,
- Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,
- Ընկերության արտաքին աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
- Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը,
- Լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը,
- «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարք), եթե խոշոր գործարքի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության զուտ ակտիվների 75 տոկոսը և ավելին: Խոշոր Գործարքները ընդունվում են քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների առնվազն 75%-ով,
- Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

4.2.7 Կանոնադրության 4.2.6 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին, Տնօրենին, Գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

4.2.8 Ընդհանուր Ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 3 (երեք) օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով:

4.3 Խորհուրդը

4.3.1 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասության սահմաններում և կարող է լուծել ցանկացած հարց, որը չի հանդիսանում Ընդհանուր Ժողովի և Գործադիր մարմնի (տնօրենի) բացառիկ իրավասությունը:

4.3.2 Խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնց լիազորությունների տևողությունը սահմանափակված չէ: Խորհրդի անդամները նշանակում և ազատվում են Ընդհանուր ժողովի կողմից: Խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը:

4.3.3 Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Խորհրդի ոչ հեռակա նիստերը կարող են անցկացվել նաև էլեկտրոնային կապի միջոցով, իրական ժամանակի ռեժիմում: Խորհուրդը, օրենքով չարգելված կարգով, կարող է ընդունել որոշումներ նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

4.3.4 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- Տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը,
- Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,
- Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

- Ընկերության բաժնեմասերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, նրանց կանոնադրությունների հաստատումը,
- Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- Ընկերության վերստուգող հանձնաժողովի նշանակումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը և ընդունումը,
- Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- Ընկերության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնակարգերի հաստատումը,
- Ընկերությունում աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.3.5 Կանոնադրության 4.3.4 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

4.3.6 Խորհուրդն իրավասու է, եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն երկու/երրորդը:

4.3.7 Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3 (երկու/երրորդ) մեծամասնությամբ, եթե տվյալ որոշման կայացման համար օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ:

4.3.8 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 3 (երեք) օրվա ընթացքում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

4.3.9 Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

4.3.10 Խորհրդի իրավասությանը և գործունեությանը վերաբերող և Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները կարող են կարգավորվել Ընկերության խորհրդի կանոնակարգով:

4.3.11 Խորհրդի նախագահը՝ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

4.3.12 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

4.4.Ընկերության գործադիր մարմինները

4.4.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի, Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

4.4.2 Տնօրենի գործառույթները

Տնօրենը՝

- ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում

- առանց լիազորագրի գործում է ընկերության անունից,
- տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից.
- տալիս է հրամաններ՝ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.
- Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- Սահմանում է Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները, խորհրդի կողմից ընդունված միջակայքում.
- Քննարկում և որոշումներ է ընդունում Ընկերության գույք ձեռք բերելու, օտարման կամ օտարման հնարավորության հետ կապված այլ գործարքների վերաբերյալ:
- Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը:
- Որոշումներ է ընդունում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ:

4.4.3 Ընկերության տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

4.4.4 Տնօրենի տեղակալները նշանակվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության տնօրենի ներկայացմամբ:

4.4.5 Տնօրենը կազմակերպումէ Ընդհանուր Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

4.5. Գլխավոր հաշվապահի գործառույթները

4.5.1 Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

4.5.2 Ընկերության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով:

4.5.3 Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Տնօրենին:

« ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ »
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

մասնակիցների ցուցակ

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը (պետությունը որտեղ հիմնադրվել է, անվանումը) անձնագրի (գրանցման) տվյալները հասցեն (գտնվելու վայրը)	Բաժնեմասերի քանակը	Բաժնեմասի չափը %
Պետությունը, որտեղ հիմնադրվել է՝ ԱՄՆ Անվանումը ՝ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳ ՖՈՐՄՈՒԼԱ, ԻՆՔ. Գրանցման տվյալները Հարկ վճարողի հաշվառման համար՝ 38-4070353, Գտնվելու վայրը՝ Դելավեր նահանգ, Նյու Քասլ շրջան, փոստային ինդեքս՝ 19702, 2035 Սանսեթ Լեյք փողոց, տարածք՝ Բ-2	1	100%

65